



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

629

Մոպսան.

«Գիշակա՛ն աղփա՛ս»

«Գիշակա՛ն զուժակա՛նք»

Թ 1891.

84-Յ
Մ-90

Մանգրյան

343

ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂՔԱՏ

ԳԻՒՂԱԿԱՆ ԶՈՒԹԱԿԱՀԱՐ

15 2007

ԹԻՖԼԻՍ
1891

845
5-89 44

ԳԻՒԻ ԴԸ-ՄՈՊԱՍՍԱՆ

ԳԻՒԴԱԿԱՆ ԱՂՔԱՏ

ԹԱՐԴ. ՕՐԻՈՐԴ. Մ. ՄԱՂՈՒՄԵԱՆ

1002
5341
P-



ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ «ԱՐՐՐ» Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ
Զօլովիճ. պր. և Քարհատիճ. փող. տնակում:

1891

Дозволено цензурою. Тифлисъ, 5 апрѣля 1891 г.

Тип. „Ароръ“, Т. Я. Назарьянъ, уг. Гол. пр. и Бар. ул.

Նիկոլն էլ մի ժամանակ ուրախ էր և երջանիկ... Բայց տասնըհինգ տարեկան հասակում նրան մի մեծ անբախտութիւն պատահեց.— ճանապարհով գնալիս լանկարծ ընկաւ կառքի տակ և երկու ոտքը ջարդ ու փշուր եղան: Այդ օրուանիցն աղքատութիւն էր անում. ճանապարհներին՝ անց ու դարձ անողներից, կամ դռնէ դուռն ընկած՝ գիւղացիներից ողորմութիւն էր խնդրում և գլուխը պահում: Նա չըջում էր երկու կոպիտ փայտ կրճնատակերին դէմ տված և պստիկ գլուխը վերև ցցած:

Նիկոլը չը գիտէր ո՞վքեր էին իր ծնողները: Նա ընկեցիկ էր: Նրան գտել էր առուի մօտ գիւղի տէրտէրը: Քրիստոնեայ մարգիկ նրան ողորմացել, պահել, մեծացրել էին մինչև տասնըհինգ տարեկան հասակը, բայց ոչ մի ուսում և արհեստ չէին սովորեցրել: Այդ էր պատճառը, որ այն դժբախտ օրից սկսած, երբ նա կառքի տակ ընկաւ և երկու ոտքը կոտրեց, ուրիշ ոչինչ չը կարողացաւ անել, և սկսեց ձեռք մեկնել ու ողորմութիւն խնդրել:

Կար մի բարեգութ տիկին, որ հոգ էր տանում Նիկոլի վրա, թոյլ էր տալիս որ ապրի իր շան բնի մէջ, որի ներսը լարդ էր շաղ տված, որ փա-

փուկ լինի: Նիկոլն ապահով էր որ տիկնոջ դռանը մի կտոր հաց կը գտնի: Շատ էր պատահում, որ տիկինն իր պատշգամբից կամ պատուհանից չըսված էր Նիկոլին մի քանի կոպեկ...

Բայց այդ բախտաւոր օրերն էլ անցան, տիկինը այլ ևս չը կար, մեռել էր:

Գիւղերում նրան էլ ողորմութիւն չէին տալիս: Քառասուն տարի շարունակ այդ գիւղերում մուրացկանութիւն անելով՝ գիւղացիներին բոլորովին զրգւացրել էր. նրանց ջիգրը գալիս էր, երբ տեսնում էին, թէ ինչպէս այդ տնանկը դռնէ-դռուն ընկած՝ ողորմութիւն է անում:

Նիկոլը, թէպէտ լաւ զգում էր գիւղացիների բարկութիւնը, բայց էլի սիրտ չէր անում ուրիշ, հեռու տեղ գնալ. — այդ երեք-չորս գիւղերից դուրս նա կհանքումն ուրիշ ոչ մի տեղ չէր եղել և չէր ճանաչում:

Նիկոլը չէր կարողանում հասկանալ, թէ արդեօք աշխարհը այդ մի քանի գիւղերով վերջանում է, թէ ոչ. նա չը գիտէր թէ դրանցից դէնը ինչ կայ, և նոյն իսկ վախենում էր դրա մասին մտածել:

Գիւղացիք ձանձրանալով նրանից, որ միշտ իրանց հանդերձումն է ման գալիս և ողորմութիւն հաւաքում, բարկացկոտ ձայնով ասում էին.

— Է՛յ, Նիկոլ, քնչ ես միշտ մեզանից ողորմութիւն ուզում ու զահլաներս տանում, ուրիշ գիւղ չը կայ, քնչ է:

Այդ ժամանակ Նիկոլը բոլորովին շւարած ու

գլուխը կորցրած, լուռ էր մնում և աշխատում մի կերպ հեռանալ իր հետ խօսողների աչքից: Այդպիսի ըոպէներում նրա սրտին տիրում էր այն երկիւղը, որ շատ անգամ զգում են խեղճ ու անօգնական մարդիկ հազար ու մի պատճառներից: Անծանօթ մարդիկ, մի նկատողութիւն կամ կասկածոտ հայեացք, մի թթու կամ ծանր խօսք, այդ բոլորը սարսափ էին ազդում Նիկոլի պէս խեղճ մարդկանց վրա:

Խեղճն ամենից շատ վախենում էր պօլիցիականներից, որոնց տեսնելիս թագ էր կենում մացառների ու քարերի արանքում. այդ ժամանակ սովորաբար նա երեսի վրա պառկում էր գետնին և այնպէս պինդ կպչում հողին, որ պօլիցիականների սուր աչքերն անգամ չէին կարողանում նրա կեղտոտ ցնցոտիները հողից ջոկել:

Ճշմարիտ է, նա ոչ մի ժամանակ պօլիցիականների հետ գործ չէր ունեցել, բայց էլի նրանցից սաստիկ վախենում էր և պատահած ժամանակ՝ մեծ ճարպիկութեամբ այդ «կարգապահների» աչքից խոյս էր տալիս: Այդ երկիւղն ու ճարպիկութիւնը բնականից նրա մէջը կային, կարծես թէ ժառանգել էր իր անյայտ ծնողներից, որոնք երևի իրան պէս խեղճ ու տնանկ մարդիկ են եղել:

Իշխանահու մահից յետոյ Նիկոլն ամեն ապաստանարանից զուրկ մնաց. մի գետնափոր հիւղ, մի չարգախ անգամ չունէր, որ գլուխը պահէր: Ամառն ուր պատահում էր, քնում էր, իսկ ձմեռը

չը տեսնված ճարպիկութեամբ իրան մի կերպ գցում գիւղացիների մարագներն ու գոմերը, որտեղից շատ անգամ չորս-հինգ օրով դուրս չէր գալիս, եթէ ուտելու բաւականաչափ հաց էր ունենում:

Նիկոլը մարդկանց մէջ ապրում էր այնպէս, ինչպէս անտառում բռնած վայրի գազան. ոչ ոքի չէր սիրում, գիւղացիք էլ նրան աչքով աչք չունէին տեսնելու. ամենքի աչքին նա ատելի էր, ամենքն էլ նրան արհամարհում էին:

Նիկոլի անունը՝ ծաղրելով գանգակ էին դրել, որովհետեւ երկու փայտ կռնատակերին դէմ տված ման գալիս՝ թոկից կախ արած զսնգակի նման այս ու այն կողմն էր ճօճվում:

Այս անգամ Նիկոլի բանը շատ վատ էր. երկու օր էր խեղճը ոչինչ չէր կերել, ողորմութիւն տուող էլ չը կար: Գիւղացի կանայք, երբ հեռուից նկատում էին որ նա իրանց մօտ է գալիս, չանչում էին ու հայհոյելով ասում.

—Այ գլխամեռ, այ գրողի փայ, էլի եկար, սը-ֆաթիդ կարօտ էինք մնացել. ախր երեք օր չը կայ, քեզ հաց տւեցինք:

Այսպիսի խօսքերին Նիկոլը ոչ մի պատասխան չէր տալիս. սուս ու փուս երեսը շուռ էր տալի, լնզլնգալով մտնում էր հարեւան տունը, ուր նոյն խօսքերն էր լսում, նոյն ընդունելութիւնը գտնում: Մեծ ու պստիկ սովորաբար նրան այս խօսքերն էին ասում.

—Հը, էլի եկար, դուրս կորի, գնա. տարին

տասներկու ամիս հօ պարտական չենք քեզ պէս աւարայ մարդուն հաց տալ, պահէ:

Բայց այդ աւարայ մարդիկն էլ ամեն օր սովածանում, ուտել են ուզում...

Նիկոլը սոված փորով երեք գիւղ պտտեց, ամեն տեղ ողորմութիւն խնդրեց և ոչինչ չըստացաւ, ոչ մի կտոր հաց և ոչ մի կոպէկ փող: Նրա միակ յոյսը մնաց իրան ծանօթ չորրորդ գիւղը: Մինչև այդ գիւղը երկու վերստից աւելի ճանապարհ կար, իսկ սովածութիւնից ու թուլութիւնից քիչ էր մնում, որ ուշքը դնայ, որովհետեւ երկար ժամանակ բերանը նշխարք չէր դրել և գրպանումն էլ կոպէկ չը կար:

Գեկտեմբեր ամիսն էր, փչում էր ցուրտ քամի: Մութ մոխրագոյն ամպերն այնպէս էին միմեանց վրա կուտակվել ու եփկնքը պատել, որ քիչ էր մընում երկրին հասնէին: Կատաղի քամին վզվզալով՝ կոտրատում էր ծառերի չոր ու մերկ ճիւղերը, և առաջն արած քշում՝ երկնքի մութ ամպերը:

Խեղճ Նիկոլը քաշ գալով, կամաց-կամաց, գնում էր իւր ճանապարհով: Մեծ ճիգ էր թափում, մինչև որ կարողանում էր իր փայտերը յետ ու առաջ դնելով, շարունակել իր ճանապարհը: Երբեմն նրատում էր առուի մօտ և մի քանի ըռպէ հանգստանում: Նա շատ շուտ էր յոգնում, նրա մարմինը չէր զարգացել և ուժեղացել, այլ այնպէս թոյլ ու բոշ էր, ինչպէս երեխայի մարմինը. դրա համար էլ սաստիկ քաղցը նրան այնպէս էր տանջում, որ քիչ

էր մնում հոգին դուրս գալ: Նրա ուշք ու միտքը միայն այն էր, թէ քնչպէս անի, որ մի կտոր չոր հաց ճարի:

Նրեք ժամ շարունակ Նիկոլը տանջվեց ցեխոտ ձանապարհի վրա քաշ գալով: Նրբ հասաւ մօտակայ գիւղի այգիներին, սաստիկ ուրախացաւ, կրկնապատկեց իր ջանքը և այնպէս արագ-արագ գնաց, ինչպէս իր կեանքում երբէք չէր գնացել:

Նիկոլն ողորմութիւն ուզեց առաջին պատահած գիւղացուց, որ զայրացած նրան պատասխանեց.

— Ելի եկա՞ր, ինչ անաբ ուռ, աներես մարդ ես:

Եւ ուր գնում էր խեղճ ողորմելին, ամեն տեղ նրան հաչոյում, անպատվում էին և դադարի ձեռքով յետ դարձնում:

Սմբողջ գիւղը պտտելուց և ոչինչ չտանալուց յետոյ՝ Նիկոլը գնաց դէպի մօտակայ ագարակները: Ձանապարհն այնպէս ցեխ էր, որ նա մարդու ուժերից վեր ճիգ թափելով, հազիւ էր կարողանում իր փայտերը ցեխից հանել ու առաջ գնալ: Ագարակներում էլ նրան ամեն տեղ անխիղճ կերպով դուրս էին անում: Թարսի պէս օրն էլ շատ վատ օր էր, այն ցուրտ ու ամպամած օրերից մէկը, երբ մարդու սիրտ ու հոգին կարծես քարանում են, և մարդս զայրանում, գազան է կտրում: Այգայիսի ժամանակ մարդու ձեռքը խուփ է մնում և սիրտը՝ անշարժ, երբ նրանից օգնութիւն ու ողորմութիւն են խնդրում:

Այսպէս Նիկոլը բոլոր գիւղացիներին դիմեց, աղաչեց, պաղատեց, և ամեն տեղ բացի անխիղճ հայ-

հոյանքից ու երեսճեծանքից ուրիշ բան չստացաւ: Խեղճն ուժասպառ ընկաւ մի փոսի մէջ, որը ցանկապատի փոխարէն՝ փորված էր մի հարուստ ագարակատիրոջ բագի շուրջը: Քաղցը, ցուրտն ու յոգնածութիւնը նրան տանջում էին. նա անշարժ ընկած էր և վախենում էր մի փոքրիկ շարժում անել, որ ցաւերը չկրկնապատկեն, այլ մի քիչ մեղմանան: Խեղճը մտքովն էլ չէր անց կացնում, թէ ախր քնչ մեղք է արել, քնչ յանցանք է գործել, որ դատապարտված է այսքան չարչարվելու և տանջվելու:

Բայց և այնպէս Նիկոլն իր յոյսը բոլորովին չէր կտրել. նա ուզում էր ապրել, ապրելու ցանկութիւնն ու բնազդումը նրա մէջ շատ ուժեղ էր: Նիկոլին թուում էր, որ մի աներևոյթ ձեռք իրան կօգնի, մի ճար կանի: Այգայիսի խորհրդաւոր օգնութեան ու փրկութեան յոյսը մարդկանց սիրտ է տալիս նեղ դրութեան մէջ, բայց թէ որտեղից պիտի լինի այդ օգնութիւնը, դրա մասին երբէք չեն մըտածում:

Ագարակատիրոջ բագում կար մօտ տասնըհինգ հաւ, որոնք ցիւր ու ցան եղած՝ կտցահարում էին գետինը և գտած կուտն ու միջատները կուլ տալիս: Այսպէս հաւերն էլ կերակրվում էին այն հոգից, որ կերակրում է աշխարհիս բոլոր արարածներին...

Նիկոլն երկար ժամանակ ապուշ կտրած նայում էր հաւերին. խեղճի սիրտը շատ ուզեց մի անգամ տապալկած հաւի միս ուտել, յանկարծ նրա գլխի մէջ

մի յանցաւոր միտք ծագեց.—մտածեց հէնց այդ հաւերից մէկն որսալ:

Նիկոլը մի քար վերցրեց և խփեց հաւերին. նրանցից մէկը թրփրտալով վեր ընկաւ, մնացածները ցիր ու ցան եղան՝ կշկշալով փախան: Քարը դիպել էր հաւերից մէկի գլխին, որն արիւննաշաղախ ընկած էր: Նիկոլը փայտերն առաւ կռնատակը և ագահութեամբ վրա պրծաւ որ որսը վերցնի: Խեղճը հաւին դեռ չէր մօտեցել, յանկարծ զգաց, որ մէկը մէջքին սաստիկ խփեց՝ կարծես կացնի գըլխով լինէր: Հարուածի սաստիկութիւնից Նիկոլը տասը քայլ առաջ ընկաւ և երեսի վրա գետնին փռվեց: Խփողն ագարակի ու հաւերի տէրն էր: Նա զայրացած ու կատաղած յարձակվեց Նիկոլի վրա ու նրան այնպէս ծեծեց, ինչպէս սովորաբար ծեծում են գիւղացիք իրանց գողերին:

Աղմուկի վրա վազէվազ եկան ագարակատիրոջ մշակները. նրանք իրանց տիրոջ ծեծի պակասը լրացրին. բոլորն էլ ընկան սոված Նիկոլի վրա ու անխնայ ծեծեցին: Վերջապէս երբ նրանց կատաղութիւնը մի քիչ անցաւ և ծեծելուց յոգնեցին, այդ աղքատին քաշէքաշ տարան գցեցին փայտատունը, իսկ երկու մշակ գնացին պօլիցիականներին իմաց տալու:

Ծեծված, ջարդված և կիսամեռ Նիկոլը ընկած էր փայտատանը ամբողջ երեկոն, գիշերը և առաւօտը մինչև ճաշը: Ճաշին վերջապէս եկան պօլիցիականները: Նրանք գիմադրութիւնից վախենալով,

մեծ զգուշութեամբ բացարին փայտատան դուռը: Ագարակատէրը նրանց հաւատացրել էր, որ առաջին անգամ աղքատն էր իր վրա յարձակվել, իսկ ինքը միայն մեծ դժուարութեամբ էր գիմադրել:

Վերջապէս պօլիցիականներից մեծը մտաւ փայտատունը և Նիկոլին ձայն տվեց.

—Ե՛յ, վեր կաց:

Բայց ողորմելին՝ սաստիկ ցաւից՝ անկարող էր շարժվել. որքան իրան զօւ տվեց, փայտերն այս ու այն կողմը շարժեց, որ վեր կենայ, բան չը դուրս եկաւ:

Պօլիցիականները մտածեցին թէ նա խորամանկութիւն է անում, և սուտ ուշադնաց է եղել: Նրանք հազար ու մի ենթադրութիւններ էին անում, թէ ո՞վ է իմանում այդ աղքատը ինչ չար մտքեր ունի: Ել երկար չսպասեցին, այլ նրա երկու ուսերից պինդ բռնած՝ հայհոյելով ու բրթբրթելով, բարձրացրին և փայտերը կռնատակերին դէմ տված կանգնեցրին:

Սաստիկ սարսափը Նիկոլին մի քիչ ոյժ տվեց: Նա զօռով կարողացաւ իր փայտերի վրա յենված մնալ:

—ձանապարհ ընկէք, հրաման տվեց պօլիցիականների գլխաւորը:

Ագարակում ապրողները բոլորը հաւաքվեցին, որ տեսնեն ո՞նց են տանում այդ անպիտան գողին: Կանայք նրա լետեից չանչում էին. իսկ տղամարդիկ ծաղրում էին ու ձայն տալիս. «Քու ճաշն էլ եփեցին, կրունկդ դէսը, էլ լետ չես գայ»:

ձանապարհին պատահած գիւղացիք կանգ էին առնում, գլխները շարժում ու ասում.

—Երևի մի բան է թռցրել:

Գիշերը հասան դաւառի գլխաւոր քաղաքը, ուր Նիկոլն երբեք չէր եղել: Նա գլուխը կորցրել էր և ամենեւին չէր հասկանում, թէ իրան ինչ են անում և ինչ պիտի անեն: Տեսած նոր շինութիւններն ու նոր մարդիկ նրա սիրտը դող էին գցում, սարսափ էին ազդում, բայց թէ ինչո՞ւ էր այդ չափ վախենում՝ ինքն էլ չգիտէր:

Նիկոլը ձայն, ծպտուն չէր հանում: Նա սուս էր, որովհետեւ ամենեւին ոչինչ չէր հասկանում, թէ իր շուրջն ինչ է կատարւում: Ասենք—եթէ նա ուղենար էլ խօսել, դժուար թէ մէկը նրան հասկանար, որովհետեւ երկար տարիներ շատ քիչ առիթ էր ունեցել մէկի հետ մի երկու խօսք ասելու: Նա համարեա անկարող էր որևէ միտք պարզ խօսքերով ուրիշին հասկացնել:

Նիկոլին գցեցին քաղաքային բանտը: Պօլիցիականները մտքներովն էլ անց չկացրին, որ նա երեք օր է, որ նշխարք չի դրել բերանը: Այդ վիճակի մէջ նրան թողեցին մինչևի միւս առաւօտ:

Միւս օրն եկան Նիկոլի ետեւից, որ տանեն քննչի մօտ, բայց նա արդէն քնած էր յաւիտենական քնով...

—Այ քեզ խաթալ, բացականչեց պօլիցիականներից մէկը, շօշափելով Նիկոլի անշնչացած դիակը:

Վ Ե Ր Ջ

ԳԻՒՂԱԿԱՆ ԶՈՒԹԱԿԱՆՆԵՐ

Ը Ս Տ Ա ՈՒ Է Ր Բ Ա Խ Ի

ԹԱՐԳ, ՕՐԻՈՐԳ Ն. Մ.

Թ Ի Ֆ Լ Ի Ս

1891

I

Քերմանական մի փոքրիկ գիւղում, որի անունն էր Էբինգէն, սրանից մօտ երեսուն տարի առաջ օծում էին գիւղի նորաշէն եկեղեցին:

Գիւղացիները երկար տարիներ կոպէկ կոպէկ փող էին հաւաքել եկեղեցու շինութեան համար, և հազիւ հազ կարողացան շինել, վերջացնել:

Շրջակայ գիւղերից մեծ բազմութիւն էր հաւաքվել օծումը տեսնելու: Շատերի հետ միասին, այդ ժամանակ գիւղն եկաւ, Ստտուած գիտէ, թէ յորտեղից, մի ջութակահար՝ իր ջութակով և կռան տակն էլ մի կապոց, որի մէջ էր նրա ունեցած-չունեցածը: Նա քառասուն տարեկան էր. փոքրիկ հասակով, երկար, շէկ մազերով: Այնպիսի մի բարի և ուրախ դէմք ունէր, որ երեսին նայելիւ թէ չէ՝ սիրտդ կ'ուրախանար:

Գիւղացիների համար, մանաւանդ տօն օրերին, մեծ ուրախութիւն է, եթէ գիւղում մուզիկ ածող, երգող կայ: Այդ պատճառով նորեկ ջութակահարին մի խոճիթից միւսն էին քաշ տալիս: Ամբողջ երեք օր և երեք գիշեր ջութակահարը միմեանց վրա ածում էր, և այնպէս էլ լաւ էր ածում, որ

լսողների քեֆն էր գալիս: Շատերը, թէ ծերեր, թէ ջահէններ, այնքան էին զուարճանում, և ուրախանում, որ ուրախութիւնն սկսում էին պարել: Այդ ուրախութիւնների ժամանակ ջութակահարը համարեւ, թէ ոչինչ չէր ուտում. նա միայն գարեջուր էր խմում: Ամեն մի երգից կամ պարից յետոյ, գաւաթներով գարեջուր էին տալիս նրան: Զութակահարի գլուխը քիչ-քիչ տաքանում էր և նա այնպէս էր ածում, որ նոյն իսկ ծերերը խոստովանում էին, թէ այդպիսի ածող իրանց կեանքում չէին տեսել:

Գիւղի մէջ կար մի պանդոկ, որտեղ գիւղացիները հաւաքւում էին՝ ջութակահարի հետ ժամանակ անցկացնելու համար: Պանդոկի պահողն էր մի ալրի կին: Պանդոկի դռան ճակատին կախ էր տուած մի ցուցանակ, որի վրա գիւղական նախշքեալը արեգակ էր նկարել, — Աստուած արեգակ համարէր — և այդ պատճառով պանդոկը կոչւում էր „Արեգակ“:

Եկւոր ջութակահարը գիւղում տուն տեղ չունէր, այդ պատճառով նա ապրում էր պանդոկումը: Պատահում էր, որ մօտ գիւղերից նրան կանչում էին ջութակ ածելու, նա գնում էր, բայց էլի միշտ վերադառնում էր պանդոկը: Նա ո՛չ վարել գիտէր, ո՛չ ցանել, և ո՛չ հնձել, նրա փեշակը ածելն էր: Պանդոկում նա մեծ մասամբ ջութակ էր ածում: Վերջում այնքան մտերմացաւ ամենքին, որ հիւրերի համար հէքեաթներ էր ասում, երգ էր երգում, և այնպէս ընտանեւոր էր վարվում ամենքի հետ,

որ կարծէք թէ պանդոկի մէջ ծառայող լինէր. նա այնքան տանու մարդ դարձաւ, որ միշտ պանդոկի մասին խօսելիս ասում էր. „մեր“, „մենք“: Օրինակ նա ասում էր. „մեր պանդոկը շատ լաւ տեղ է“, „մենք նոր գինի ենք բերել տուել“:

II

Եկեղեցու օծումից յետոյ մի սաղ տարի անցաւ, իսկ մեր ջութակահարը իսկի գիւղից դուրս գալու միտք չունէր: Եթէ նա պանդոկից հեռանար, բոլոր գիւղացիքը կը տխրէին: Միայն պանդոկի պահող կինն էր, որ ուրիշ կերպ էր մտածում: Գիւղացի կանայք փսփսում էին, որ ջութակահարը ուզում է պսակվել այդ կնոջ հետ: Կինը լսում էր և չարանում: Նա համ ուզում էր, որ այդ բամբասանքները չը լինեն, համ էլ խեղճն էր գալիս և չէր ուզում ջութակահարին պանդոկից դուրս անել:

Մի օր նա ասաց ջութակահարին.

— Լաւ չի՞ լինիլ, որ այստեղից մի ուրիշ տեղ գնաս:

— Ի՞նչու եմ գնում, այստեղ ինձ համար շատ լաւ է:

— Ախր գիւղումը հազար մի բաներ են խօսում:

— Ես իմ կամքով դուրս գնացող չեմ, պատասխանեց ջութակահարը. զօռով դուրս կանչս, կերթամ:

— Ախ, Աստուած իմ, ի՞նչ անեմ, պայց կիսաջարացած տանտիկինը:

— Ի՞նչ պէտք է անեմ, իմ կինս դարձիր:

— Այդ էր պակաս, ասաց ծիծաղելով տանտի-

1002
5341



կինը, հանաքով բոթեց ջութակահարին և երեսը շուռ տուեց: Զութակահարը հասկացաւ այդ ծիծաղի միտքը, վերցրեց ջութակը, սկսեց ածել և երգել իր յօրինած հետևեալ երգը.

Ինձ հետ պսակվիր,

Իմ կինս դարձիր.

Մի բարձի ծերանանք,

Միասին ուրախանանք:

Տանտիկինը „թիւհ“ արեց և գնաց: Անցաւ էլի երկու ամիս: Զութակահարը պանդոկից ոտն էլ գուրս չէր դնում: Հէնց որ տանտիկինը ներս էր գալիս, նա սկսում էր.

Ինձ հետ պսակվիր,

Իմ կինս դարձիր...

Քանի գնաց՝ տանտիկնոջ սիրտը կակղեց: Մի օր ջութակահարը առաւօտը գուրս գնաց և վերագարձաւ երեկոյեան: Մտաւ պանդոկը, կանգնեց տանտիկնոջ առաջ և ձեռքին բռնած թուղթը ցոյց տալով, ասաց.

— Էս էլ քեզ պսակի հրամանը:

— Ի՞նչ պսակի հրաման, թիւհ Էս խօսում:

— Վահ, հանաք չեմ անում: Ա՛յ, պարոն վարժապետ, այս մի բարձր ձայնով կարգա՛, ասաց նա զիմելով զիւղական վարժապետին, որ այդ ըոպէին մտաւ սենեակը: Վարժապետը կարգաց և շնորհաւորեց:

Միւս օրը բոլոր գիւղացիք իմացան, որ կիւրակի օր նրանց հարսանիքը պետք է լինի:

III

Կիւրակի օրը բոլոր գիւղացիք նորահարսի և նորափեսի հետ գնացին եկեղեցին:

Զութակահարը կապել էր սպիտակ փողպատ և հագել էր մի հին ֆրակ, որ փոխ էր առել զիւղական վարժապետից. ձեռքին բռնած ունէր իր սիրելի ջութակը և սաղ ճանապարհին ածում էր մի ուրախ եղանակ, որ ինքն էր հնարել:

Եկեղեցու դրան մօտ վայր դրեց ջութակը և նորահարսի ձեռքից բռնելով, հպարտ-հպարտ մօտեցաւ սեղանին:

Հարսանիքը շատ ուրախ անցաւ և բոլոր գիւղացիք մինչև կէս գիշերը քէֆ էին անում:

Ապրում էր ջութակահարը իր կնոջ հետ ուրախ և զուարթ: Ամենքն էլ ուրախսւնում էին նրանց բախտաւորութիւնը տեսնելով:

Բոլոր շրջակայքումը „Արեգակ“ պանդոկի անունը քանի գնում՝ հռչակվում էր: Գիւղացիք ծանր աշխատանքից յետոյ, մտնում էին պանդոկը և հանգստանում՝ խմելով մի մի թաս զինի կամ գարեջուր: Իսկ ջութակահարի խաղը և ուրախ տանտիկնոջ հանաքները ամենքի սիրտն ուրախացնում էին: Շատ էլ փող չէին աշխատում պանդոկի տէրերը՝ տանտէրը փող աշխատելու կերպը իսկի չէր իմանում. կինն էլ շատ բարի սիրտ ունէր, մէկի վրա պարտք մնացած փողն էր կորչում, մի

քանիսին էլ, որոնք փող չէին ունենում, ձրի էին հիւրասիրում: Այնպէս որ հազիւ էին ծալրը ծալրին հասցնում:

Անցաւ մի քանի տարի և ջութակահարը շատ փոխվեց: Նա շատ անգամ գլուխը կախ էր գցում և տխրում: Հարցնող լինի, քնչ էր պատահել նրան: Ահա, թէ ինչ: Զութակահարը տխուր էր նրա համար, որ այժմ շատ քիչ էր ջութակ ածում և գիւղացիներին ուրախացնում: Գաւառապետը ասել էր, որ գիւղացիք իրանց հարկերը վատ են վճարում, և լայտնել՝ որ գիւղացիք շատ պէտք է աշխատեն և քիչ քէֆ անեն: Այդ պատճառով գաւառապետը հրամայեց, որ ամեն անգամ, երբ գիւղացիք կուգենան քէֆ անել, պէտք է իշխանութիւնից հրաման վերցնեն:

Պրանից լետոյ գիւղացիք շատ քիչ էին ուրախանում և զուարճանում...

Երբ ջութակահարը տեսաւ, որ հասակաւոր լսողներ այժմ համարեա՛ թէ չկան, վերցնում էր ջութակը և գնում նստում մեծ չինարի ծառի տակ, որ գտնվում էր գիւղի ուսումնարանի մօտ: Հէնց որ երեխաները դուրս էին գալիս, նա սկսում էր ածել և երգել: Պալրոցի աշակերտներից և աշակերտուհիներից շատերը, որ միւսնոյն դպրոցում խառն նստած էին սովորում, շատ երգեր սովորեցին: Երեխաները մեծերից պակաս չէին սիրում ջութակահարին և ամենքը նայում էին նրա վրա՝ ինչպէս հարազատ պապի: Բայց ծերունու համար այդ ուրա-

խութիւնը երկար չը տւեց: Գիւղական քահանան արգելեց երեխաների մօտ ածելը: Նա այդ արգելեց ասելով թէ՛ դրա պատճառով երեխաները լաւ չեն կարգում:

Այդ բաւական չէր, մէկ ուրիշ դժբախտութիւն էլ պատահեց: Նրա ուրախ, զուարթ, միշտ ծիծաղկոտ կինը, որի հետ քսան և հինգ տարի երջանիկ ապրել էր միւսնոյն տանը, մեռաւ: Երեխայ էլ չունէր, որ նրանով գոնէ միխթարվէր:

Ծերունու սիրտը շատ կոտրվեց:

— Ե՛հ, ասում էր նա շատ անգամ, ծերութիւնն էլ մի բան չի:

Առաջուայ պէս նա ապրում էր միւսնոյն տանը, թէև „Արեգակ“ պանդոկը վաղուց փակված էր: Զինարու տակ՝ երեխաների համար ջութակ ածել չէր կարելի, այդ պատճառով նա վաղ առաւօտները, ջութակը կռնատակին գնում էր դաշտը՝ ուր գիւղացիք աշխատում էին: Ծերունին ածում էր, մի-մի անգամ էլ երգում էր. և նրա ածելու ու երգի շնորհով գիւղացիք աւելի լաւ էին բանում և աշխատանքը այնքան էլ ծանր չէր թւում նրանց...

Մի քանի տարի էլ այդպէս ապրեց մեր ջութակահարը:

IV

Ամառուայ տաք և խաղաղ գիշեր էր:

Գիւղացիք, ցերեկուայ ծանր աշխատանքից լե-

տոյ, հանգիստ կերպով քնել էին դաշտում: Յանկարծ գիւղի մէջ աղմուկ բարձրացաւ և լսվեց ձիու ոտների ձայն: Մի գիւղացի, նստած չը թամբած ձիու վրա՝ քշում էր և գոչում.— Կրակ է ընկել, կրակ: Շուտով դաշտում քնած բոլոր գիւղացիները վազեցին դէպի գիւղը: Եկեղեցու զանգակները սկսեցին ծեծել:

Գիւղացիք իրանց համար հրդեհաշէջ մեքենայ ունէին. երկու ձի լծեցին, կապեցին մեքենան, լետեւից էլ ջրի ամաններ, առջևից ցցեցին երկու լապտեր, որ լոյս անի և ձիաները քշեցին: Ամենքն էլ միմեանց հարցնում էին, թէ ում տունն է այրվում և վազում էին դէպի այրվող տունը՝ օգնելու համար:

Երեխաները շապկանց և կանաչք իրանց տներից դուրս էին տալիս եղած-չեղածը.— անկողին, ամանեղէն և տնային ուրիշ բաներ:

—Ո՞ւմ տունն է այրվում, ո՞ւմ տունը, հարցնում էին անդադար:

—Ջութակահարի տունը:

Եւ ամենքն էլ վազում էին, որ օգնեն իրանց սիրած մարդուն:

Բայց ուշ էր. տունը արդէն կրակի մէջ էր. ջուրը պրծաւ, իսկ գետը շատ հեռու էր: Չը կարողացան մինչև անգամ երկու կովը և եզը ազատել: Խեղճ կենդանիները բառաչելով այրվեցին գոմում:

—Ջութակահարը որտեղ է, ջութակահարը, հարցնում էին շատերը:

—Նա անկողնում այրվել է, պատասխանում էին մի քանիսը:

—Նա փախել է, ասում էին միւսները:

Բայց և այնպէս ոչ ոք ճիշտը չէր իմանում:

Ինչպէս այդպիսի դէպքերում պատահում է, ժողովրդի մէջ զանազան լուրեր էին պտտում: Մի քանիսն ասում էին, որ նա սլափալարվել է գիւղական դարբնի տանը, միւսները պատասխանում էին, թէ եկեղեցի է գնացել և այնտեղ լալիս է ու աղօթում: Բայց ջութակահարին չը գտան ոչ այնտեղ և ոչ այնտեղ, և վերջը ամենքն էլ այն կարծիքի եկան, որ նա այրվել է իր տան մէջ: Ամենքն էլ ցաւում էին ջութակահարի վրա և մինչև անգամ ամաչում էին, որ չաշխատեցին փրկել այն մարդուն, որը երկար տարիներ իրանց այնքան զուարճացրել է և ուրախացրել: Լուսաբացին հրդեհը հանգաւ. միայն ջութակահարի տունն էր այրված. հարևան տները կարողացել էին պաշտպանել:

Քիչ, քիչ ժողովուրդը սկսեց ցրվել: Արևը նոր էր բացվում, երբ մօտիկ բլուրից դէպի գիւղը սկսեց իջնել երկու անիւանի մի սալ՝ երկու եզ լծած: Սալի վրա նստած էր մինիհար, ծերունի մարդ. նամիայն մի շապիկ ունէր հագած, և վրան էլ գցած ունէր մի հին կապերտի կտոր: Առաւօտեան քամին խաղացնում էր ծերունու երկար, սպիտակ մազերը և ձիւնի պէս սպիտակ միւրուքը: Դա ջութակահարն էր: Նա ձեռքին բռնած ունէր ջութակը: Հրդեհից վերադարձող ջահէլները նրան գտան անտառի մօտ, որտեղ նա

նստած էր մի շապիկով՝ կրծքի վրա սղմած իր անբաժան ընկեր-ջուլթակը։ Երբ սալը բոլորովին մօտեցաւ գիւղին, ջուլթակահարը, պատահելով հրդեհից վերագարձող գիւղացիներին, քօքեց ջուլթակը և ածեց մի շատ ուրախ եղանակ, կարծես թէ ոչինչ պատահած չը լինէր, և սկսեց երգել մի երգ, որ նա նոր էր յօրինել այդ օրուայ առիթով։

Այսօր կրկին ուրախ եմ

Կրկին զուարթ, բարեկամներ,

Հրդեհը լափեց իմ տնակ,

Բայց ինձ հետ է իմ ջուլթակ։

Ջուլթակահար, ածա, երգիր,

Նոր նոր երգեր յօրինիր։

Ամենքն էլ աչքերը չռած, նայում էին այդ զարմանալի մարդու վրա և այնպէս ուրախ էին, որ կարծես թէ նա մեռելներից է յարուլթիւն առել։

—Մի բան տուէք խմելու, տղերք, շատ ծարաւ եմ։ Նրան ջուր տուեցին։

—Ա՛յ, թէ՛նք ասեմ ձեզ, դռչեց նա, ջրով էք ուզում ծարաւս կոտրել. գինին կտրվել է, թէ՛նք է։

Ամենքն էլ շրջապատեցին սալակը, աշխատում էին մխիթարել ծերունուն և խոստանում էին օգնել նոր տուն շինելիս։ Ա՛պա նրան վեր բերեցին սալակից և կռնատակերը մտած՝ փառաւոր կերպով տարան հրդեհից ազատ մնացած հարեաններից մէկի տունը։ Այնտեղ նստեցին, սփռոց գցեցին, հաց, մսեղէն, զինի բերեցին և հիւրասիրեցին ամենքին սիրելի ծերունուն։ Ջուլթակահարը այնքան ուրախա-

ցաւ, որ մի քանի տարուց ի վեր նրան այդքան ուրախ չէին տեսել։ Կարծէք թէ հրդեհը ո՛չ թէ միայն չէր տխրացրել նրան, այլ նա մի քանի տարով էլ ջահելացել էր։

—Ձէ, բարեկամներս, ասում էր նա գինի խմելով, ես առանց տան էլ եօլայ կերթամ։ Ինձ թէ՛նք հարկաւոր է տունը. ես որ կամ՝ ծիտ եմ։ Ծախ պէս այսօր այստեղ, վաղը այնտեղ գլուխս կը պահեմ։ Ես իմ կեանքումս սեպհական ոչինչ չեմ ունեցել, բացի իմ հանգուցեալ կնոջ տանից. ուրեմն թող ծերութեանս ժամանակ էլ ոչինչ չունենամ։ Ես էլ երկար չեմ ապրելու, և իմ ածելուս ու երգիս համար էլ լինի՝ յոյս ունեմ, որ ինձ տանից դուրս չեն անիլ, եթէ մէկի մօտ գիշերելու գնամ։

Ինչքան էլ աշխատեցին, որ ծերունուն համոզեն, բայց նա իր ասածի վրա պինդ մնաց։ Ամենքն էլ նրան այնքան սիրում էին, որ իսկոյն վճռեցին, որ բոլոր գիւղացիք միասին նրա հոգսերը քաշեն։ Մէկը բաճկոն բերեց, միւսը վարտիկ, երրորդը կօշիկներ, և այդպիսով ծերունուն ոտից մինչև գլուխը զուքեցին։

Ջուլթակահարը ուրախանում էր, ինչպէս մի երեխայ և ուրախ-ուրախ, խրճի մէջ մանաւաղով, ասում էր. «Տնաշէններ, տեսնում էք, այս ըստէս ամբողջ գիւղը հագած ունեմ», և ապա սկսեց իւր ամեն մի շորին ընծայողի անունը տալ։

—Ես միշտ ասել եմ, որ հին շորը մարդու վրա լաւ է նստում։ Երբ իմ հանգուցեալ կինը,—

Աստուած նրա հոգին լուսաւորի—ինձ համար նոր շոր էր կարում, կը հաւատա՞ք, դիտմամբ գնում էի եկեղեցի և այնպէս անում, որ վրան մոմ կաթի և հին երևայ: Թէ չէ, սա ինչ բան է, նոր շոր ես հագնում և ամեն ըոպէ պէտք է հոգաս, որ վրան բան չը կաթէ, չը կեղտոտվի: Ա՛յ, շորը այսպէս պէտք է լինի, ասաց նա, նայելով իր այժմեան շորերին.—ճշմարիտ է, մի քիչ լաւ չի նստում ինձ վրա, բայց ոչինչ: Նոր ծնվածներին, որ շոր են բաշխում, նրանց վրա էլ լաւ չի գալիս: Իսկ ես, բարեկամներս, չէ՞ որ այսօր նոր ծնված եմ:

Եւ ճշմարիտ, կարծես ծերունին նորից էր ծնվել: Ո՛ւր կորաւ նրա տխրութիւնը, մտատանջութիւնը: Ծիծաղում, խօսում, ածում, երգում էր, և նրան հետևելով՝ խրճիթում մի այնպիսի քէֆ սկսվեց, որի նմանը գիւղացիք վաղուց չէին լիշում:

V

Յանկարծ խրճիթի ուրախութիւնը դադարեց: Խրճիթը մտաւ մի աստիճանաւոր՝ թղթերը կըռնատակին, որ իմանայ հրդեհի պատճառը, այլ և այն թէ, ինչքան վնաս է ստացել ջուլթակահարը, որովհետեւ տունը ապահովացրած էր՝ դեռ ևս ջուլթակահարի հանգուցեալ կնոջ օրով: Եյքինգինի գիւղացիները վաղուց սովորութիւն էին արել իրանց տները կրակից ապահովացնել: Զուլթակահարը ամեն բան պարզ պատմեց:

—Ի՛նչ թագցնեմ, ասաց նա, ես սովորութիւն ունեմ չիբուխ քաշել: Ա՛յ, այս չիբուխը, որ ես ա-

զատել եմ կրակից իմ ջուլթակի հետ: Առաջ ես չիբուխը կպցնում էի հրահանով, քանի որ դեռ ևս լուցկի չէր դուրս եկել: Լուցկին, որ դուրս եկաւ, մէկ արկղիկ առայ: Աստուած վկայ, լաւ բան է. չըրթ, և ահա կրակը պատրաստ է. մարդու քէֆն է գալիս: Ես էի հիւր գնում, թէ ուրիշն էր ինձ մօտ գալիս, միշտ գործ էի ածում այդ լուցկիներէից: Ով գիտէ, միայն Աստուծուն է յայտնի, կարելի է դրանցից մէկը ընկաւ խոտի դէզի վրա... Միայն թէ ես չեմ նկատել... Ախր էլ ուրիշ քնչից կարող էր կրակ պատահել... Աստուած վկայ, էլ չեմ անիլ...

Ամենքն էլ հռհռացին այդ խօսքերի վրա. աստիճանաւորն էլ նոցա հետ միասին: Պարզ էր, որ հրդեհը լուցկիներից էր պատահել, որոնց չրթոցից ծերունին, ինչպէս մի երեխայ, ուրախանում էր:

Ի՛նչ պէտք էր անել:

Մթթէ նրան պէտք էր դատի ենթարկել կրակ գցելու համար, մանաւանդ որ՝ եթէ մի մարդ կար, որը վնասված էր, դա հէնց ինքը ջուլթակահարն էր: Աստիճանաւորը բարի մարդ էր. նա շատ անգամ էր լսել ջուլթակահարի ածելը և ուրախացել, այդ պատճառով էլ նրան շատ սիրում էր:

—Տէրը քեզ հետ, ասաց աստիճանաւորը. և ապա խիստ կերպով պատուիրեց, որ սրանից լետոյ զգոյշ վարվեն լուցկիի հետ և հեռացաւ, որ չը խանգարի նրանց ուրախութիւնը:

Զուլթակահարը աստիճանաւորի խիղճը շարժեց և նա վճռեց մի որ և է կերպով ապահովացնել նրան:

Բաւականի մեծ էր այն գումարը, որով ապահովացրած էր տունը: Բայց օրէնքով գումարը տրվում էր միայն այն դէպքում, եթէ այլված տան տեղը նոր փուն շինվէր:

Գիւղացիք վաղուց արդէն գիւղի մէջտեղումը տեղ էին փնտրում նոր դպրոց շինելու համար: Նոքա, աստիճանաւորի խորհրդով, առաջարկեցին ջուլթակահարին, որ նա իրանց վրա ծախի այլված տան տեղը:

Ծերունին համաձայնեց, բայց մերժեց փող վերցնել: Ուստի գիւղացիք նրան մի փոքրիկ թոշակ նշանակեցին մինչի մահը: Զուլթակահարը համաձայնվեց: Բայց ստացած փողն էլ նա միշտ ծախսում էր գիւղի բոլոր աղքատների հետ միասին, այնպէս որ նրա զրպանումը ոչ մի կոպէկ չէր մնում: Մի բան՝ որ չափից դուրս ուրախացրեց ծերունուն, այդ այն էր, որ աստիճանաւորը թոյլտուութիւն ձեռք բերեց ծերունու համար՝ երեկոյեանները չինարու տակ ջուլթակ ածելու: Եւ ահա, ջուլթակահարը նորից սկսեց իր սիրած գործը: Մի քանի ամսից յետոյ գիւղումը ոչ թէ միայն բոլոր տղաները ու աղջիկներն էին երգում, այլ և լաւ ձայն ունեցողներից կազմվեց մի երգեցիկ խումբ՝ եկեղեցում երգելու համար. իսկ մի քանիսները սովորեցին մինչև անգամ ջուլթակի վրա ածել:

Միւս ամառը սկսեցին դպրոցի համար նոր շինութիւն շինել: Ծերունին մի րոպէ անգամ չէր հեռանում այնտեղից: Նա ուշադրութեամբ հետևում

էր, թէ ինչպէս էին փորում, պատեր շինում, գերաններ տաշում: Դեռ արեւ չը ծագած, երբ վարպետները եկած չէին լինում, նա այնտեղ էր: Ծաշում էր նա նոցա հետ և ուրախացնում իր խաղով: Մինչև անգամ հարեան գիւղերից գալիս էին շատերը, տեսնում շինութիւնը, նստում, խօսում և լսում՝ ջուլթակահարի խաղը: Ամբողջ ամառը դրպրոցի շինութեան տեղը մի ժողովատեղի էր գիւղացիների համար: Մանաւանդ երեկոյեանները և տօն օրերին հաւաքվում էին այդտեղ հանգստանալու և ուրախանալու: Շատ անգամ գիւղական քէֆեր էլ էին սարքում: Իշխանութիւնը իր կողմից չը տեսնելու էր դնում: Եւ վատ բան էր միթէ. այդ համեստ քէֆերի ժամանակ գիւղացիք մոռանում էին իրանց ծանր հոգսերը, իրանց դարդերը . . .

Վերջապէս շինութիւնը աւարտեցին: Այդ առիթով մի փոքրիկ հանգէս էլ կատարեցին: Դա մի երջանիկ օր էր ծերունու համար: Շինութեան ճակատը զարդարեցին ծաղիկներով և կանաչով: Հաւաքվեցին բոլոր գիւղացիք, հարեան գիւղերից էլ շատերն եկան. վարպետները՝ մաքուր շորեր հագած, գիւղական վարժապետը, աշակերտները և աշակերտուհիները, քահանան, մինչև անգամ աստիճանաւորը՝ բոլորը, բոլորը միասին՝ մուգիկով գնացին ջուլթակահարին բերելու: Ծերունին ուրախութիւնից համ ծիծաղում էր, համ լաց էր լինում: Նա այնպէս բախտաւոր էր, որ պատմել չի կարելի: Ուրախութիւնից նա խաղում էր երեխաների հետ, մինչ

չև անգամ պար բռնեց ջահէլ հարսների հետ, մինչև ուշ գիշեր անդադար երգում ու ածում էր...

Միւս առաւօտ ծերունին այլ ևս չը կար: Կարծես թէ նա այդ օրին էր սպասում, որ տեսնի ու յետոյ ուրախ սրտով՝ մնաս բարով ասի աշխարհին:

Առաւօտը գնացին դպրոց, որտեղ՝ ջութակահարի ցանկութեան համեմատ՝ նրա համար անկողին էին պատրաստել, և հէնց այդ անկողնումն էլ նրան մեռած գտան: Նրա դէմքը այնպէս հանգիստ էր, որ կարծես ժպտում լինէր: Նա ձեռքին բռնած ունէր կնտկնտոցը, իսկ կողքին դրած էր ջութակը...

Ջութակահարին լաւ թաղեցին: Դպրոցի աշակերտուհիները իրանց ձեռքով պսակներ շինեցին և դրանցով զարդարեցին դագաղը: Յուզարկաւորութեան ժամանակ, երգեցիկ խումբը գնում էր առջևից և երգում այն երգերից մէկը, որ հանգուցեալը ինքն էր սովորեցրել: Բոլոր գիւղացիք և ուրիշ գիւղերից էլ շատերը ներկայ էին թաղման: Դագաղը հերթով ձեռքերի վրա տարան մինչև գերեզմանը: Ջութակահարին գերեզմանատանը չը թաղեցին, այլ դպրոցի հին շինութեան մօտ, այն չինարու տակ, որտեղ նա միշտ ածում էր և երեխաներին երգել սովորեցնում: Թաղեցին և միաձայն վճռեցին գերեզմանի վրա մեծ խաչ կանգնեցնել:

Խաչի վրա փորագրեցին ջութակ ու կնտկնտոց և գրեցին հետևեալ տապանագիրը, որ յօրինեց գիւղի տիրացուն. — «Այստեղ հանգչում է մեր գիւղական ջութակահարը. նրա նման ջութակ ածող չը

կար: Աստուած լուսաւորի նրա հոգին»:

Այդ օրից անցան շատ տարիներ: Բայց մինչև այժմ էլ, շատ անգամ գիւղի ուսումնարանի աշակերտները և աշակերտուհիները հաւաքվում են չինարու տակ և ուրախաձայն երգում ջութակահարի երգերը:

Եւ այդ երգերը աւանդաբար հին աշակերտներից անցնում են նոր աշակերտներին...

Վ Ե Ր Զ



Լ ո յ ս տ ե ս ա ն

Ժողովրդական ընթերցանութեան համար.

Վ ի ա ղ ա ղ ր ա կ ա ն

ՀԱՆՕ, ԹԻԼԸՔԱՀԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻԿ	5 Կ.
ԱՅՆՏԵՂ ԵՆ ԱՅՍՏԵՂ, Գ. ԱՐԾՐՈՒՆՈՒ	10 Կ.
ԱՐՆԱԳԻՆ, ԼԷՕԻ	7 Կ.
ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՏԻԿԻՆ	5 Կ.
ԼԻՐ ԹԱԳԱՌՈՐ, ԸՍՏ ՇԷՔԱԼԻՐԻ	5 Կ.
ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՀԻ, ԹԱՐԳ. Խ. Մ.	5 Կ.
ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂՔԱՏ	5 Կ.
ԳԻՒՂԱԿԱՆ ՋՈՒԹԱԿԱՀԱՐ	

Բ ն ա ղ ի տ ա կ ա ն

ՊՍՏԻԿ Է ԲԱՅՅ ՉՍՏԻԿ Է, ԼՈՒՆԿԵՎԵԼԻ	5 Կ.
ԻՆՉ Է ԿԱՅԾԱԿԸ	5 Կ.

Կ Ե Ն Ս Ա Ղ Ր Ա Կ Ա Ն

ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. ՄԱՂՈՒՄԵԱՆԻ	50 Կ.
---------------------------	-------

Ա ռ ո ղ ջ ա ղ ա հ ա կ ա ն

ԽՕԼԵՐԱ ԵՆ ՆՐԱ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ	5 Կ.
--------------------------------------	------

ԳԻՆԸ 5 ԿՈՊԵԿ

Գիմեւ. Թիֆլիս,

Խ. Մալումեան

0004724

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004724

